



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12

№ 323

1803 կոմունիստական կոմաչովորդին
УНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ

№ 5

~~№ 326~~

~~№ 325~~

Պրոլետարներ բոլոր երկրների, ճիացեք!

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

Ի Ն Տ Ե Ր Ա Ա Ց Ի Օ Ն Ա Լ Ի

ՄԱՆԻՖԵՍՏ

ԱՄԲՈՋ ԱՇԽԱՐՔԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻՆ

Թարգմ. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

Манифест Коммунистического Интернационала
пролетариату всего мира

56
1248 — 492
50

№ 5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
КОММУНИСТИЧЕСКАЯ ПАРТИЯ АРМЕНИИ № 5

Պրոլետարներ բոլոր երկրների, ծիացեք!

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ց Ի Օ Ն Ա Լ Ի

ՄԱՆԻՖԵՍՏ

ԱՄԲՈղջ ԱՇԽԱՏԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻՆ

Թիարգիւ. Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

Манифест Коммунистического Интернационала
пролетариату всего мира

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ,
ՄՈԽԿԱՆ—1919.

ԿՈՐԱԽՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼԻ ՄԱՆԻՖԵՍՏ

Ամբողջ աշխարհի պրոլետարիատին

72 տարի առաջ, Կօմունիստական Կուսակցութիւնը ներկայացրեց աշխարհին իր ծրագիրը մանիֆէստի ձևով, որ գրել էին պրոլետարական լեզափոխութեան մեծադոյն աւետարեր Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը։ Արդէն այն ժամանակ, կօմունիզմը, որ զեռ նոր էր դուրս եկել կռւի ասպարէզ, շրջապատճեամբ էր ունեսոր դասակարգերի թոյնով, զրապարտութեամբ, ատելութեամբ ու հալածանքներով. նըանց, որոնք ճշմարիտ կերպով տեսնում էին կօմունիզմի մէջ իրենց մահաբեր թշնամուն։ $\frac{3}{4}$ գարու ընթացյըում կօմունիզմի զարգացումը գնաց բարդ ուղիներով, վերելքի փոթորիկների հետ մէկտեղ նա դիացյու անկման շրջանները, լաջողութիւնների հետ միասին—գառնազին պարտութիւններ։ Սակայն իր շարժման հիմունքում նա անցաւ այն ուղիով, որ նախորոշել էր կօմունիստական Կուսակցութեան մանիֆէստը։ Վերջին վճռական կռւի էպօխան առելի ուշ հասաւ, քան սպասում և լոյս ունէին սօցիալական լեզափոխութեան առաջեալները։ Սակայն նա հասաւ։

Ենք, կօմունիստներս, եւրօղալի, Ամերիկալի և Ասիալի դանազան երրների լեզափոխական պրոլետարիատի ներկայացուցիչներս, հաւաքւելով Խորհրդադին Մօսկվայում, զգում ու զիտակյում ենք, որ մենք ժառանգորդներն ու անօրէններն ենք այն գործի, որի ծրագիրը լայտորարւեց 72 տարի սրա-

50 - Ա 9-2



նից առաջ Մեր առաջ գրւած խնդիրը կայանում է նրանում, որ ի մի ձուլենք բանւոր դասակարդի յեղափոխական փորձառութիւնը, մաքրենք շարժումք օպօրտիւնիզմի և սօցիալ-պատրիոտիզմի դաւաճանական խառնուրդից, միացնենք համաշխարհային պրօէտարիտաթի բարոր նշանական կուսակցութիւնների ջանքերը և այգպիսով հեշտացնենք և արագացնենք կօմմունիստական յեղափոխութեան լաղթանակը ամբողջ աշխարհու մ:

* * *

Այժմ, երբ Եւրօպան ծածկւած է մխացող աւերակների բեկորներով ու կոյտերով, մեծագոյն հրձիգները պատերազմի յանցաւարների որանումներով են զրադաց: Նրանց ետևից շարում են իրենց ծառաները, պրօֆեսորներ, պարլամէնտարներ, բուրժւագիայի ալլ քաղաքական սուտէնիօրներ:

Երկար տարիների ընթացքում սօցիալիզմը գուշակում էր իմպէրիոլիստական պատերազմի մնխուսափելիութիւնը, աեւնում էր նրա յանցաւորներին—Երկու գիտաւոր բանակների և ընդհանրապէս բոլոր կապիտալիստական երկրների ունեոր դատակարդերի անկուշտ սեփական շահախնդրութեան մէջ: Պայթիւնից երկու տարի առաջ պատասխանատու սօցիալիստական դեկաֆարները Բազելի կօնդրէուում մերկացրին իմպէրիալիզմը, որպէս գալիք պատերազմի յանցաւոր, և սպառնացին բուրժւագիային պայթեցնել նրա զիսին սօցիալիստական հատուցաւմ՝ միլիտարիզմի ոճրագործութիւնների համար: Այժմ, հինգ տարւայ փորձից և այն բոլորից յետոյ, երբ պատմութիւնը, երեսն բերելով Գերմանիայի գիշատիչ ախորժակները, բաց է անում դաշնակիցների ոչ պակաս յանցագործ արարքները, համաձայնութեան երկրների պետական սօցիալիստները իրենց կառավարութիւնների հեաքով շարունակում են հրապարակ հանել պատերազմի յանցաւորին, յանձին գահինեց գերմանական կայսեր: Դեռ աւելին. գերմանական սօցիալ-պատրիոտները, որոնք 1914 թ. օգոստոսին

Հօհէնցօլէրնի գիպլօմատիքական «Սպիտակ գիրքը» յարտարարում էին ժաղովրդների սրբազն աւետարան, այժմ համաձայնութեան սօցիալիստների ետեից քարշ գալով զգւելի համուախօսութեամբ պատերազմի գիտաւոր յանցաւորութեան մէջ մեղադրում են խորակւած գերմանական միապետութիւնը, որին նրանք ուրկօրէն ծառայում էին: Այդ հանապարհով նրանք լոյս ունեն ծոռացնել տալ իրենց սեփական դերը և միտքաժմանակ յաղթաղների ողորմածութիւնը վաստակել: Սակայն բօմանօվների, հօհէնցօլէրների ու հարսրուրդների խորակւած դինաստիաների այդ երկրների կապիտալիստական կլիկների խաղացած դերի հետ միասին, ծաւալող գէպքերի և դիպլօմատիքական մերկացութեամբ լուսով հրապարակ է գալիս Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Միացեալ նահանգների տիրապետող գասակարգերի գերը, իր բարոր անհաջիւ ոնրագործութեամբ:

Անգլիական դիպլօմատիան մինչև պատերազմի պայթիւնի մօմէնան իսկ չհանեց իր վրացից խորհրդաւոր դիմաժածիլ: Սիափի կառավարութիւնը վախենում էր, որ եթէ ինքը կատէզօրիկ կերպով յայտարարի պատերազմի մէջ մասնակցելու մասին, այն գէպքում Բերլինի կառավարութիւնը կը նահանչի,—և պատերազմը տեղի չի ունենա: Լօնդոնում ցանկանում էին պատերազմ: Ուստի իրենց պահում էին այնպէս, որ Բերլինում և Վենայում յոյս դնէին Անգլիայի չեղոքութեան վրա, այն ժամանակ, մինչ Փարիզում և Պէտրօգրադում անտարակոյս հաշւի էին առնում նրա միջամտութիւնը:

Տասնեակ տարիների զարգացման ընթացքով պատրաստած պատերազմը արձակւեց շղթաներից Վէլիկօրբիտանիայի ուղղուկի և գիտակցական պրօվակացիալով: Վերջինիս կառագործութիւնը հաշւի էր առնում, այսպիսով, աշոկցել Ռուսաստանին և Ֆրանսիային այնչափով միայն, որ ուժապատնելով նրանց, ուժաւապառ անի Գերմանիային, իր մահացութշնամուն: Սակայն գերմանական զինուրականութեան հզօ-

բութիւնը չափազանց սպառնալից հանդիսացաւ և պահանջեց Անգլիակի ոչ թէ դուշագրւող, այլ իրական մասնակցութիւնը պատերազմի մէջ Երրորդ կողմի ծիծաղողի դերը, որ հին արտգիրիայի համաձայն ուղղում էր ստանձնել Վելիկօրիառնիան, բաժին հասաւ Միայեալ Նահանդներին:

Վիլսոնի կառավարութիւնը աւելի քան հեշտութեամբ հաշուեց անգլիական բրօկագալի հետ, որը միակողմանի կերպով սանձում էր երօպական արիւնի վրայ հիմնւած ամերիկական բիրժայի սպէկուլեացիան, որովհետեւ Համաձայնութեան պետութիւնները առատ գարձարութեամբ հաստուցում էին ամերիկան բուրժազիալին «միշտղգալին իրտունը» խախտման համար: Գէրմանիայի հոկայական ռազմական դերակշռութիւնը, սակայն, հարկադրեց Վաշինգտոնի կառավարութեանը նոյնպէս զուրս գալ կեղծ չէզորութեան զրութիւնից: Միայեալ Նահանդները Երօպայի վերաբերմամբ ամբողջովին վերջրին իրենց վրա նոյն դերը, ինչ անցեալ պատերազմների մէջ խաղում էր, իսկ վերջինիս մէջ էլ տքնում էր խաղալ Անգլիան կօնտինգէնտի վերաբերմամբ—թուրացնելու մի բանակը միւսի օգնութեամբ, միշտելով ռազմական զործողութիւններին միայն այն չափով, որ ապահովի իր համար կացութեան բոլոր բարիքները:

Վիլսոնի ստավկան ամերիկան լոտորէի մէթօդների համաձայն խոշոր չէր, բայց այն վերջինն էր և դրանով ապահովեց նրա համար խաղի եկամուտը:

Կապիտալիստական կարգերի հակասութիւնները պատերազմի հետևանքով կանգնեցին մարդկութեան առաջ բանձին անասնական տանչանքների, այն է սովի, ցրտի, տարափոխիկ մասսայական հիւանդութիւնների, բարուական վայրենացման: Դրանով անփնտարեկ լուծում է աղքատանալու և կապիտալիզմից սոցիալիզմին աստիճանաբար անցնելու: Թէօրիայի վերաբերմամբ եղած ակադէմիական վէճը սոցիալիզմի մէջ Հակասութիւնների բժացման թէօրիայի ստատիստիկներն ու

պէտանտները տասնեակ տարիների ընթացքում աշխարհիս բոլոր անկիւններից զուրս էին տալիս իրական և կասկածելի փաստեր, որոնք բանւոր դասակարգի առանձին խմբակների և կատէգօրիաների բարեկեցութեան բարձրացումն են վկայում: Մասսաների աղքատութեան թէօրիան բուրժւական կաֆէգրալի ներքինների և սոցիալիստական օպօրտիւնիզմի մանկաբինների արհամարհական շւոյներով թաղւած էր համարում: Այժմ այդ աղքատութիւնը, արդէն ոչ միայն սոցիալական, այլ և Փիլիպիօգիական, բիօլոգիական, կանգնած է մեր առաջ իր ամբողջ ցնցող իրականութեամբ:

Իմպէրիալիստական պատերազմի կատաստրօֆան միանգամայն սրբեց արհեստակցական և պարլամէնտական կուլուրում նախառական ներքերը: Մինչդեռ այս պատերազմը ծնւել է ու անծել կապիտալիզմի ներքին աէնգէնցներից հէնց այն չափով, ինչ որ և այն տնաեսական համաձայնութիւններն (սเดլք) և պարլամէնտական կօմպրօմիսները, որոնք նա թաղեց արեան և ցեսի մէջ:

Փինանսական կապիտալը, որ հրեց մարդկութիւնը պատերազմի յորձանուտի մէջ, ինքը կատաստրօֆիկ վիոլետութիւններ կրեց այս պատերազմում: Թղթագրամների կախումը արտադրութեան նիւթական հիմունքներից վերջնականապէս խախտեց: Աւելի ևս կորցնելով, որպէս կա գիտալիստական ապրանքաշրջանառութեան միջոցի և բէդւեատօրի իրենց նշանակութիւնը, թղթագրամները բէկվլուցիալի, լաիշտակման և ընդհանրապէս զինուորա-տնտեսական բռնութեան դարձիք գարձան:

Թղթագրամների այլասերումը արտացըլում է կապիտալիստական ապրանքաշրջանառութեան ընդհանուր մահացունգնաժամը: Եթէ ազատ մրցութիւնը, որպէս արտագրութեան և բաշխման ըէգումնատօր, տնտեսութեան զլիստրուր շրջաններում զուրս էր մղւած տրէստների և մօնօպօլիաների սիստէմայսի, դեռ պատերազմին նախընթադադասաւական ստա-

նամեակներում, ապա պատերազմի ընթացքով առն-ուղղութիւն աւող դերը գուրս կորդւեց անտեսական միութիւնների ձեռքից և անմիջականօրէն դրւեց զինւորա-պետական իշխանութեան ձեռքք: Հում նիւթեքի բաշխումը, Բագւի կամ բումինական հաւթի, զօնէցեան քարածուխի, ուկրանական հացի օգտագործումը, գերմանական շոգեկառքերի, վագոնների, ավտոմօքիների վիճակը, սպատանչ Եւրօպային հացով ու մով ապահովելը, — երկրագնդիս տնտեսական կեանքի այս բոլոր հիմնական հարցերն ընթացք են ստանում ո՛չ ապատ կօնկուքէնցիալով, և ո՛չ ազգային ու միջազգային տրէստների և կօնսօրցիումների կօմքինացիաներով, այլ զինւորական բռնութեան անմիջական դարձադրութեամբ յանուն նրա յետագա պահպանման Եթէ պետական իշխանութեան լիտակատար Ենթարկումը Փինանսական կապիտալին հասցրեց մարդկութիւնը իմպէրիալիստական սպանանգոցին, ապա այլ սպանանցոցի միջոցով Փինանսական կապիտալը մինչև վերջին ծալք միլիոնարիզացիալի Ենթարկեց ոչ միայն պետառթիւնը, այլ և իրեն իսկ և արդէն անընդունակ է կատարել իր հիմնական տնտեսական ֆունկցիաները այլ կերպ, քան երկաթի և արեան միջոցով:

Օպօրտիւնիստները, որոնք պատերազմից առաջ կօչ էին անում բանւորներին դէպի չափաւորութիւն, յանուն աստիճանական փոխանցման՝ սօցիալիզմին, որոնք պատերազմի ժամանակ պահանջում էին դասակարգային հնագանդութիւն, յանուն միութեան՝ ազգային պաշտպանութեան դարձում, կրկին պահանջում են պրօլետարիատից ինքնաժանացումնայս անդամ պատերազմի սօսկալի հետեանըները չըցնելունպատակով: Եթէ որ այս քարոզն ըմբռնւած լինէր բանւորական ֆաստակի կողմից, այն ժամանակ կապիտալիստական զարգացումը կը վերահանդնելի մի քանի սերունդների ոսկորների վրա՝ նոր, էլ աւելի կենտրոնացած հրէշային ձևերով, անխուսափելի համաշխարհային պատերազմի նոր հե-

ռանկարների հետ: Մարդկութեան բաղդին, այդ անհն արէ: Տնտեսական կեանքի պետականացումը, որի գէմ այնպէս բողոքում էր կապիտալիստական լիբէրալիզմը, կատարւած փաստ դարձաւ: Այդ փաստից դէպի լեռ—ոչ միայն ազատ կօնկուրէնցիալին, այլև արէստների, սինդիկատների և այլ տնտեսական սպրուտների տիրապետութեանը — վերադարձ չկա արգէն: Խոնդիրը միայն նրանում է կայանում, թէ ով պէտք է լինի պետականացած արտադրութեան յետագա վարողը՝ իմպէրիալիստական պետութիւնը, թէ յաղթական պրօլետարիատի պետութիւնը:

Այլ խօսքերով, ամբողջ աշխատաւոր ճարդկութիւնը պէտք է գառնա նորտական հարկատում յաղթական համաշխարհային կլիկայի, որը ժողովրդների Լիկայի Փիրմայի ատակ, և միջազգային» բանակի և «միջազգային» նաւատարմի օգնութեամբ պէտք է կողոպտի և խեղդի մէկ մասին, կերակրի միւններին, ամեն տեղ ու ամենուրեք շղթաներ հաղցնելով պրօլետարիատին՝ իր սեփական տիրապետութիւնը պահպնելու միակ նպատակով: Կամ թէ Եւրօպայի և միւս աշխարհամասների առաջաւոր երկրների բանւոր դասակարգը ինքը կը տիրապետի քայլքացած, քարուքանդ եղած տնտեսութիւնը, որ ապահովի նրա վերածնունդը սօցիալիստական սկզբունքներով:

Վերապրող նզնաժամի Քաջօն ան կրնատել հնաբաւոր է միտին պրօլետարական դիկտատուրայի միջոցներով, որը չի նայում անցեալի վրա, հաշւի չի առնում ոչ ժառանգական արտօնութիւնները, ոչ սեփականութեան իրաւունքները, զեկավարում է սովորուկ մասսաների փրկութեան կարիքներով: Այդ նպատակի համար համախմբում է ի մի բոլոր միջոցները և ուժերը, մտցնում է ընդհանուր պարտադիր աշխատանք, հաստատում է աշխատաւորական կարգապահութեան ըէմբէ, որ այդ ուղիով մի քանի տարւա ընթացքում ոչ միայն բժշկի պատերազմի հասցրած խոր ու խոցու վեր-

քերլ, այլ և կանգնեցնի մարդկութիւնը նոր, դեռ գոյութիւն չունեցած բարձունքի վրա:

* * *

Աղջակին պետութիւնը, որ հզօրագոյն խթան է հանդիսացել կասկիտալիստական զարգացմանը, գարձել է չափազանց նեղ արտադրական ուժերի զարգացման համար: Աւելի քան ժանր հանդիսացաւ այն մանր պետութիւնների դրութիւնը, որոնք ներս են խոթւած Եւրօպայի և միւս աշխարհամասերի մեծ ինքնակալութիւնների արանքում: Այդ մանր պետութիւնները, որ առաջ են եկել զանազան ժամանակներում, որպէս մեծերի աւելյուկ կարւածքներ, որպէս մանր դրամ՝ զանազան ժառայութիւնների համար վճարման դէպքում, որպէս ռազմագիտական բաւֆեներ, ունեն իրենց գինաստիւները, իրենց կառավարող կիեկները, իրենց իմպէրիալիստական պահանջ ձբառումները, իրենց գիւտանազիտական սրիկայութիւնները: Նրանց թափանցիկ անկախութիւնը պահուում էր նրա վրա, ինչի վրա պահուում էր Եւրօպայի հաւասարակշռութիւնը. այն է, երկու իմպէրիալիստական բանակների անխղելի անտագոնիզմի վրա: Պատերազմը խախտեց այդ հաւասարակշռութիւնը: Տալով սկզբում հսկայտկան գերակշռութիւն Գերմանիային, նա ստիպեց մանր պետութիւններին փնտռել իրենց փրկութիւնը գերմանական միլիտարիզմի մեծահոգութեան մէջ: Այնուհետև, երբ Գերմանիան չարգւած դուրս եկաւ, մանր պետութիւնների բուրժւաղիան իրենց պատիօտական «սօցիալիստների» հետ միասին շուռ եկաւ զիմանորելու դաշնակիցների յաղթափական իմպէրակիզմին, և Վիլսօնական ծրագրի կեղծ ու պատիր կէտերի մէջ սկսեց փնտռել իր յետազա անկախ գոյութեան երաշխիքները: Մինչդեռ, Աւստրօ-Վէնդրիայի միապետութեան կազմից անեց մանր պետութիւնների թիւը, ցարական կայսրութեան մասերից բաժնեցին ու ելան նոր պետութիւններ, որոնք, դեռ հազիւ ծնունդ առած, արդէն իրար կոկորդից են

բռնում պետական սահմանների սիրոյն: Դաշնակից իմպէրիալիստները միաժամանակ հին ու նոր մանր պետութիւնների կոմբինացիաներ են պաարատում, որպէսզի կապկապեն նրանց փոխագարչ ատելութեան և ամենքի թուլութեան ընդհանուր երաշխիքով:

Ճնշելով և բռնաբարելով մանր ու թոյլ ժողովրդներին, նրանց քաղցի և ստորացման մատնելով, դաշնակից իմպէրիալիստները, ծիշտ այնպէս, ինչպէս մի քանի ժամանակ սրանից առաջ կենարոնական կայսրութիւնների իմպէրիալիստները, չեն գալիքրում խօսել աղբերի ինքնորոշման իրաւունքի մասին, որը ներկայումս վերջնականապէս ունահարւած է նրանց կողմից Եւրոպայում և բոլոր մնացած աշխարհամասերում:

Մանր ժողովրդներին ազատ գոյութեան հնարաւորութիւնը կարող է ապահովել միան պրօխտաբական Յեղափոխութիւնը, որը կազատի բոլոր երկրների արտադրական ուժերը պարփակւած աղդպային պետութիւնների ճանկերից, միայնելով ժողովրդները սերա տնտեսուկան համագործակցութեան մէջ նոր տնտեսական պլանի հիմունքներով, և հնարաւորութիւն կտա ամենաթոյլ և փոքրաքանակ ժողովրդին ազատ ու անկախ կառավարել իր աղդպային կուլտուրայի գործերը, տռանց որևէ վնասի միայն ու կենարոնացած Եւրոպական ու համաշխարհային տնտեսութեան համար:

Վերջին պատերազմը, որը հանդիսացաւ նշանակալից չափով որպէս պատերազմ գաղութավայրերի համար, միաժամանակ գաղութների օգնութեամբ պատերազմն էր: Առաջնորում չեղած չափերով կօլօնիաների աղդարնսկչութիւնը մասնակից արւեց Եւրօպական պատերազմին: Ինդուսները, նէզութերը, արաբները, մալդանդները կռւում էին Եւրօպայի աէրիտորիալի վրա, յանուն ինչի՞—յանուն յետազայում ևս Անդիայի ու Ֆրանսիայի ստրուկները մնալու իրենց իրաւունքի: Դեռ երբէք կապիտալիստական պետութեան բար-

յաղրկման պատկերը կօլոնիաներում այնպէս պայծառ չի եղել,
և գաղութային սարկութեան պրօրէմք այնպէս սուր կերպով չի դրւել, ինչպէս այժմ:

Այստեղից են մի շարք բացարձակ ապստամբութիւնները և յեղափոխական խմորութիւնները բոլոր կօլոնիաներում: Եւրօպակի իր մէջ իրլանդիան արիւնահեղ փողոցային կոփւներում յիշեցրեց, որ նա դեռ ևս մնում և զգում է իրեն որպէս սարկացած երկիր: Մադագասկարում, Աննամայում և այլ տեղերում բուրժւական Հանրապետութեան զօրքերը պատերազմի ընթացքում մի անգամ չեն որ ճնշել են դադութային սարուկների ապստամբութիւնը: Հնդկաստանում յեղափոխական շարժումը չի գաղարել և ոչ մի օր ու վերջին ժամանակներս առաջացրել և Ասիայի ամենահզորագոյն բանւորական գործագուլները, որոնց Վէլիկօքրիտանական կառավարութիւնը Բօմբէյում պատաժանել է զրահապատ օվտօմօքիների աշխատանքով:

Այդպիսով գաղութային խնդիրը իր ամբողջ հասակով դրւած է ոչ միայն դիւնագիտական կօնդրէսի քարտէզների վրա, ալ և իրենց կօլոնիաների մէջ: Վիլսոնի ծրագիրը նպատակ ունի լաւագոյն զէպքում փոխել գաղութային սարկութեան էտիկէտը: Կօլոնիաների ազատագրումը հնարաւոր է միայն մայր ցամաքի բանւոր գասակարգի ազատագրման հետ միասին: Ոչ միայն Աննամայի, Ալֆիրի, Բէնգալիայի, ալ և Պարսկաստանի, Հայաստանի բանւորներն ու գիւղացիները անկախ գոյութեան հնաբաւորութիւն կսանեան միայն այն ժամին, երբ Անգլիայի, Ֆրանսիայի բանւորները, տապակելով Լոյդ Զօրչին և Կէմանսօին, իրենց ձեռքը կառնեն պետական իշխանութիւնը: Աւելի զարգացած կօլոնիաներում կոփւն այժմ արգէն ընթանում է ոչ միայն աղդային ազատագրման դրօշակի տակ, ալ և ծիանգամից ընդունում է աւելի կամ պակաս պայծառ կերպով արտապայտւած սօցիալական բնոլթ: Եթէ կապիտալիստական Եւրօպան աշխար-

հիս ամենային տամայ մասերը բոնութեամբ մղել է կապիտալիստական լարաբերութիւնների յորձանուտի մէջ, ապա ոօցիալիստական Եւրօպան ազատազրւած կօլոնիաներին օդնութեան կը համանի իր տեխնիկայով, իր կազմակերպութեամբ, որպէսզի արագացնի նրանց վախանցումը գէպի համաշափի, կազմակերպւած, սօցիալիստական տնտեսութիւնը:

Ավրիփկայի և Ասիայի գաղութային ստրուկներ.

Պրոլետարական գիկտատուրայի ժամը Եւրօպայում կը հնչի ձեզ համար, ինչպէս ձեր ազատագրման ժամը:

* * *

Ամբողջ բուրժւական աշխարհը մեղադրում է կօմունիստներին աղատութեան և քաղաքական գէմօկրատիայի ոնչացման մէջ: Այդ ճշմարիտ չէ: Անցնելով իշխանութեան, պրօլետարիատը միայն երեան է բերում բուրժւական գէմօկրատիայի մէթօտների կիրառման լիակատար անհնարաւորութիւնը, և ստեղծում է նոր, աւելի բարձր, բանւորական գէմօկրատիայի պայմանները: Կապիտալիստական զարգացման ամբողջ ընթացքը, բատկապէս վերջին իմպէրիալիստական էպօխալում, օդը յնդեցրեց քաղաքական գէմօկրատիային ոչ միայն նրանով, որ ազգութիւնները բաժանեց երկու անհաշտ, թշնամամական գասակարգերի: այլ և նրանով, որ անտեսական մահացման և քաղաքական թուլութեան դատապարտեց բաղմաթիւ մանք-բուրժւական պրօլետարական խաւերին, և՝ նմանապէս հէնց պրօլետարիատի ամենաթշշւառ ստորին խաւերին:

Այն երկրների բանւոր դասակարգը, ուր պատմական գարգացումը տւել էր նրան այդ հնարաւորութիւնը, օգտագործեց քաղաքական գէմօկրատիայի բէմիմը իր կազմակերպման համար կապիտալի դէմ: Նոյնը աեղի պէտք է ունենաւ այնուհետեւ և՝ այն երկրներում, ուր բանւորական լեզափութեան համար պայմանները չեն հասունացել: Սակայն լայն անցողակի մասունները ոչ միայն գիւղերում, ալ և քաղաք-

ներում, կապիտալիզմի կողմից շատ յետ են պահում, պատմական զարգացումից ամբողջ էպօսաներ յիտ մնալով:

Բայ արիսլի և Բագէնի զիւղացին, դեռ ևս պինդ կպածիր գիւղական զանդակատանը, Ֆրանսիայի մանր զինեգործը, սնանկացած զինու խոշոր կապիտալիստական խարդախումից, Ամերիկալի մանր ագարակատէրը, կուոպտւած ու խարւած բոնկիրներից և դէպուտատներից, բոլոր դրանք, կապիտալիզմի կողմից զարգացման մեծ նանապարհից դէն շպրտւած սոցիալական խաւերը, բաղաքական դէմօկրատիայի բէժիմի կողմից թղթի վրա կոչւած են պետութիւնը կառավարելու: Բայց իրականութեան մէջ ժողովրդների բաղզը որոշող բոլոր հիմնական խնդիրներում—ֆինանսական օլիգարխիան հանում է իր որոշումները պարամէնտական դէմօկրատիայի թիկունքում: Այսէս եղաւ, ամենից առաջ պատերազմի խնդրում, այժմ այդպէս կատարւում է խաղաղութեան հարցում: Որչափով ֆինանսական օլիգարխիան իրեն նեղութիւն է տալիս լուսարտնելու իր բռնի գործողութիւնները պարամէնտական ձայնէտութիւններով, բուրժուական պետութեան տրամադրութեան տակ, անհրաժեշտ հետևանքներին հառնելու համար, գոյութիւն ունին ստի, դէմագոգիայի, զրգութմների, զրպարտութեան, կաշառքի, ահարեկման բոլոր միջոցները, որ նա ժոռանգութիւն է ստոցել դասակարգավին ստրկացման անցած դարերից և բազմապատէել է կապիտալիստական տէխնիկայի բոլոր հրաշալիքներով:

Պահանջել պրօլէտարիատից, որ նա կապիտալի դէմ ոչ թէ կեանքի, այլ մահու վերջնական պալքարում բարեհոգութեամբ պահպանի բաղաքական դէմօկրատիայի պահանջների, —այդ ճիշտ միւնոյնն է, ինչ որ՝ պահանջել աւազակների դէմ իր կեանքն ու գոյութիւնը պաշտպանող մարդուց, որ նա պահպանի ֆրանսական կուի ար եստական և պարմանական օրէնքները, որ հաստատել է նրա թշնամին և ինքը թշնամին չի պահպանում:

Կործանութերի թագաւորութեան մէջ ուր ոչ միայն արտադրութեան և փոխազրութեան միջոցները, այլ և քաղաքական դէմօկրատիայի հիմնարկութիւնները ներկայացնում են իրենցից արիւնաներկ բեկորների կոյտեր, պրօլէտարիատը ստիպւած է ստեղծել իր սեփական ապարատը, որ ծառալում է, ամենից առաջ, իր բանւոր դասակարգի ներքին կոպը պահպանելու համար, և որը ապահովում է մարդկութեան յետագա զարգացման մէջ նրա ինդավոխական միջամասութեան հնարաւորութիւնը: Խորհուրդները հանդիսավոր կութանում են այդ ապարատը:

Հին կուսակցութիւնները, պրօֆէսիօնալ միութիւնների հին կազմակերպութիւնները, յանձին իրենց դեկավար դուխուների անընդունակ հանդիսացան ոչ միայն լուծեր, այլ և բմբառներ այն խնդիրները, որ առաջարել է նոր գարաշընը: Պրօլէտարիատը ստեղծեց կազմակերպութեան նոր ձեւ, լայն, բանւորական մասսաներին ընդգրկող՝ պրօֆէսիօնալ և քաղաքական զարգացման ձեռք բերւած մոկերեսովթից անկախ, մի ճկուն ապարատ, ընդունակ ծառապէս նորոգւելու, լույսանալու, աւելի նոր և նոր խաւեր իր շրջանի մէջ ներս լույսանալու, պրօլէտարիատին մօտ կանգնած քաղաքի և դիւզի քաշելու, պրօլէտարիատին մօտ կանգնած քաղաքի և դիւզի աշխատաւոր խաւերի համար իր դռները բանալու: Բանւոր գտակարդի ինքնավարման, նրա կուի, իսկ յետադայում էլ նրա պետական իշխանութիւնը տիրապետելու այդ անփոխարինելի կազմակերպութիւնը փորձւած է գործնականապէս լանգաման երկրներում և կազմում է պրօլէտարիատի ամենանդօր յաղթանակն ու զէնքը մեր դարաշընում:

Բոլոր երկրներում, որ աշխատաւոր դասակարգերն ապրում են դիտակցական կեանքով, այժմ հիմնում են և պէտք է հիմնեն բանւորական, զինւորական և զիւղացիական պատգամաւորների Խորհուրդները: Ամքացնել Խորհուրդները, բարձրացնել նրանց հեղինակութիւնը, հակազրել նրանց բուրժուազիայի պետական ապարատին—այդ է այժմ բոլոր եր-

կրների գիտակից և ազնիւ բանւորների գործը: Խորհրդների միջոցով բանւոր դասակարգն ընդունակ է փրկել իրեն քայլակումից, որ մացնում են նրա շարքերը պատերազմի, սովոր դժոխալին ցաւերը, ունեսորների գաւաճանութիւնը: Խորհրդների միջոցով բանւոր դասակարգը ամենից աւելի ուղիղ և հեշտ իշխանութեան կհասնի այն բոլոր երկրներում, ուր Խորհուրդները կը կենարոնայնեն իրենց շուրջը աշխատաւորների մեծամասնութիւնը: Խորհուրդների միջոցով իշխանութիւնը գրաւած բանւոր դասակարգը կը կառավարի երկրի տնտեսական կուտուրական կեանքի բոլոր շրջանները, ինչ որ այդ արդէն ներկայումս տեղի ունի Ռուսաստանում:

Իմայրիալիստական պետութեան խորտակումը, ցարականից սկսած մինչև ամենից «գէմօկրատականը», ընթանում է միաժամանակ իմայրիալիստական զինւորական սխստէմի խորտակման հետ: Իմայրիալիզմի զօրահաւաքի ենթակած բազմամիջիոն զօրաբանակը կարողացաւ կանգուն մնալ միայն այնքան ժամանակ, որքան պրօիտարիատը հնատղանդ գնում էր բուրժուազիայի լծի տակ: Ազգային միութեան քայլքայումը նշանակում է զօրաբանակի անխուսափելի քայլքայումն: Այդպէս տեղի ունեցաւ առաջ Ռուսաստանում, յետոյ Գերմանիայում և Աւստրիայում: Այդ պէտք է սպասել նաև միւս իմայրիալիստական երկրներում: Գիւղացու ապստամբութիւնը կալւածատիրոց դէմ բանւորներ կապիտալիստի դէմ, երկուսինը միապետական կամ «գէմօկրատական» բիւրօկրատիայի դէմ, անխուսափելիօրէն կը բերի իր հետ զինւորների առտամբութիւնը հրամանաւատարների դէմ, իսկ յետազայում զօրաբանակի պրօիտարական և բուրժուական էլէմէնտների միջև սուր պառակումը: Իմայրիալիստական պատերազմը, որ ազգը տղիքի դէմ հանեց, անցել է և անցնում է քաղաքացիական կուտի, որ դասակարգը դասակարգի դէմ է հանել:

Բուրժուական աշխարհի սուրն ու շիւանը քաղաքացիական կուտի և կտրմիր տէրրօրի դէմ ներկայացնում են իրեն-

ցից ամենահրէշալին կեղծաւորութիւնը, որը չի իմացել քաղաքացիական կուտի պատմութիւնը: Քաղաքացիական կուտի չէր լինի, եթէ որ մարդկութեանը կորստեան եղրը բերող շահագործողների կլինկերը չը դիմադրէին աշխատաւորների ամեն մի առաջադիմական քայլին, չը կաղմակերպէին գաւադրութիւնները ու սպանութիւններ և դրսից զինւած օդնութիւն չը կանչէին պահպանելու կամ վերահաստատելու իրենց կողոպտման արտօնութիւնները:

Քաղաքացիական կուտի փաթաթւում է բանւոր դասակարգի վիճն նրա ոյներիմ թշնամիների կողմից: Զը հրաժարւելով իրենից, իր ապագայից, որը ամբողջ մարդկութեան ապագան է, բանւոր դասակարգը չի կարող հարւածին հարւածութութիւններ:

Երբէք առաջ չը երելով արւեստական քաղաքացիական կուտներ, կօմունիստական կուսակցութիւնները ձգտում են հնար եղածին չափ կրնատել նրա տևականութիւնը, երբ որ նա երկաթէ անհրաժեշտութեամբ առաջ է գալիս, նւազեցնել նրա զոհերի թիւը և, ամենից առաջ, պրօիտարիատի համար տպահովել յաղթանակը: Այստեղից առաջ է գալիս անհրաժեշտութիւն՝ ժամանակին զինաթափել բուրժուազիային, զինել բանւորներին, ստեղծել կօմունիստական զօրաբանակ, որպէս պրօիտարիատի իշխանութեան և նրա սօցիալիստական շինարարութեան անձեռնմխելիութեանը պաշտպան: Այդպէս է Խորհրդային Ռուսաստանի Կառմիր զօրաբանակը, որ առաջ է եկել և գոյութիւն ունի, որպէս պատւար բանւոր դաստիարագի նւաճումների, ներքին ու արտաքին բոլոր յարձակումների դէմ: Խորհրդային զօրաբանակը անբաժանելի է Խորհրդային պետութիւնից:

Գիւղակցելով իրենց գործի համաշխարհային բնույթը, առաջաւոր բանւորներն արդէն կաղմակերպւած սօցիալիստական շարժման առաջին քայլերից ձգտում էին նրա միշաղդային միութեանը: Նրա սկիզբը դրւած էր 1864թ. Հոնդոնում,

առաջին ինտէրնացիօնալի մէջ՝ Ֆրանս-Պրուսական պատերազմը, որից աճեց Հօհէնցօլերների Գերմանիան, որբեց ու տարաւ առաջին ինտէրնացիօնալը, միժամանակ խթան հանդիսանալով աղջային բանւորական կուսակցութիւնների գարգանալուն։ Արդէն 1889 թ. այդ կուսակցութիւնները Փարիզի համագումարում միանում են և ստեղծում 2-րդ ինտէրնացիօնալի կաղմակերպութիւնը։ Սակայն այդ շրջանում բանւորական շարժման ծանրութեան կենտրոնն ամբողջովին ընկնում էր աղջային հողի վրայ, աղջային պետութիւնների շրջանակներում, աղջային արտադրութեան հիմքերի վրայ, աղջային պարլամէնտարիզմի սահմաններում։ Կաղմակերպչական և վերանորոգչական աշխատանքի տասնեակ տարիները ստեղծեցին պարագուխների մի ամբողջ սերունդ, որոնց մեծամասնութիւնը խօսքով ընդունում էր սոցիալական յեղափոխութեան ծրագիրը, իսկ զործնականում հրաժարաւեցին նրանից, ցեխուեցին բէֆօրմիզմի մէջ, հնագանդութեամբ յարմարւելով բուժական պետութեան։ 2-րդ ինտէրնացիօնալի ղեկավար կուսակցութիւնների օպօրտիւնիստական բնոլթը պատռեց մինչև վերջ և բերեց հասցրեց համաշխարհային պատմութեան մէջ ամենամեծագուն կրախին այն մօնենտում, երբ պատմական անցքերի ընթացքը պահանջում էր բանւոր դասակարդի կուսակցութիւններից կուի յեղափոխական մէթօդները։ Եթէ որ 1870 թ. պատերազմը հարւած հասցրեց 1-ին ինտէրնացիօնալին, հրազդակ հանելով, որ նրա սոցիալայեղափոխական ծրագրի յեակ դեռ չկա մասսաների միախմբւած ուժը, ապա ուրեմն 1914 թ. պատերազմը սպանեց 2-րդ ինտէրնացիօնալը, երեան բերելով, որ բանւորական մասսաների հզօրագոյն կաղմակերպութիւններին զլուխ են կանգնած կուսակցութիւններ, որ գարձել են բուժական պետութեանը ենթակա օրդաններ։

* *

Այս վերաբերում է ոչ միայն սոցիալ-պատրիոտներին, որոնք այժմ պարզ ու որոշ անցել են բուրժուալիստի բանակը,

դարձել նրա սիրելի լիազօրներն ու վստահելի անձերը, բանւոր դասակարգի ամենայտապահ դահիճները, այլ և կենտրոնի անորոշ, անկայուն հոսանքին, որը անքում է վերականգնել 2-րդ ինտէրնացիօնալը, ալսինքն նրա ղեկավար դլուխների սահմանափակութիւնը, օպօրտիւնիզմը, լեզափոխական անզօրութիւնը։ Գերմանիայի Անկախ կուսակցութիւնը, Փրանսի մէջամանիայի Անկախ կուսակցութիւնը, Ֆրանսի մէջամանիայի սոցիալիստական կուսակցութեան ներկայ մեծամասնութիւնը, Մուլսաստանի մէնշերի խմբակը, Անդլիայի անկախ բանւորական կուսակցութիւնը և նրանց նման այլ խմբակներ, փաստորէն տքնում են իրենցով լցնել այն տեղը, մինչև պատերազմը զրաւում էին Երկրորդ ինտէրնացիօրը հին պաշտօնական կուսակցութիւնները, հրազդակ նորով առաջւա պէս կօմպրօմիսի և համաձայնութեան իդէադարով, ջլատելով ամէն կերպ պրօլէտարիատի եռանդը, ձրդձգելով նդնաժամը և ալդպիտով սաստիացնելով Եւրոպայի միակ կարգութիւնները։ Սոցիալիստական կենտրոնի զէմ կոիւր հանդիսանում է իմպերիալիզմի զէմ կուի յաջողութեան անհրաժեշտ պայման։

Թողնելով մի կողմ իրենց օրերը հաշւած պաշտօնական սոցիալիստական կուսակցութիւնների անկատարութիւնը, կեղծիքն ու նեխւածքը, մէնք կօմունիստներո, միայած 3-րդ ինտէրնացիօնալի մէջ, պիատակցում ենք, որ մէնք ենք մի Երինակնացիօնալը մէջ, յեղափոխական սերունդների, Բարեօֆից սկսած մինչև կարլ Լիրկնէխտ և Բօզ Լիւկսէմբուրդ, հերոսական շանքերի և մարտիրոսազրութիւնների իսկական շարունակողները։

Եթէ Առաջին ինտէրնացիօնալը նախահիացնում էր յետագա զարգացումը և ընդդում էր նրա ուղիները, Եթէ Երկրորդ ինտէրնացիօնալը հաւաքում ու կաղմակերպում էր միլիոն պրօլէտարներ, ապա Երրորդ ինտէրնացիօնալը հանդիլիս զորութիւնների, լեզափոխական իրականացութերի ինտէրնացիօնալը


Սոցիալիստական քննադատութիւնը բաւականաչափ խարսխանեց բուրժուական աշխարհակարգերը։ Միջազգային Կօմունիստական կուսակցութեան գործը կայանում է նրանում, որ խորապես այն և նրա տեղը կառուցի սոցիալիստական կարգերի շենքը։ Մէնք կոչ ենք անում բոլոր երկրների բանուորներին և բանւորութիւններին միանալ կօմունիստական գրոշակի տակ, որը արդէն հանդիսանում է առաջին խոշոր յաղթականների գրօշը։

Պրոլետարներ բոլոր երկրների՝ իմպէրիալիստական բարբարոսութեան դէմ, միապետութեան արաօնուած զասակարգերի դէմ, բուրժուական պետութեան և բուրժուական սեփականութեան դէմ, դաստկարդալին կամ ազգալին ճնշումների բոլոր տեսակների և ձեւերի դէմ՝ կռւի՛ մէջ, միացէ՛ք։

Բանւորական Խորհրդների, պրոլետարիատի իշխանութեան և զիիշատուրայի համար՝ յեղափոխական կռւի դրօշակի՛ տակ, Երրո՞րդ Խորհրդնայի գրօշակի տակ, պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէ՛ք։

ԴԵԼԵԳԱՑԻԱՆԵՐԻ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՄՔ

| | |
|--|------------------------|
| Դերմանիալի | ՄԱԿՍ Ա.Լ.ԲԷՌԸ. |
| Ռուսաստանի | Ն. ԼԵՆԻՆ. |
| Աւստրիալի (գերմանական) | Կ. ԳՐԱՒԹԵՐ. |
| Վենգրիալի | Ա. ՐՈՒԴՆԵԱՆՍԿԻ. |
| Շլեզիալի | ՕՏՏՈ ԶՐԻՄԼՈՒՆԴ. |
| Շլեցարիալի | ՖՐԻՑ ՊԼԱՏՏԵՆ. |
| Ամերիկալի | Բ. ՐԻՑՆԵՑՏԵՑՆ. |
| Բալկանեան Ֆէղերացիալի | Խ. ՐԱԿՈՎՈԿԻ. |
| Լեհաստանի | ՈՒՆՉԼԻԽՈՑ (ԻՒՐՈՎՈՒԿԻ). |
| Ֆինլեանդիալի | Ի. ՍԻՐՈԼԱ. |
| Ուկրայինալի | ՍԿՐԻՊՆԻԿ. |
| Լատվիալի | Կ. ԳԱՅԼԻՍ. |
| Էստոնիալի | Գ. ՊԵԳԵԼՄԱՆ. |
| Արմենիալի | Գ. ՀԱՅԿՈՒՆԻ. |
| Վոլգալի Մըանի գերմանական գաղութների | Գ. ԿԼԻՆԳԵՐ. |
| Արևելեան Ռուսաստանի Ժողով վուրդների | ԵԱԼՈՒՄՈՎ. |
| Ցիմմերվալդի Փրանսական ծախ թեր | Ա. ԳԻԼԲՈ. |



-100-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԸ. ԿԱՌԱՎԱԿ. ՀՐԱՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների) օրագիրը:
- 2) III հնտերնացիոնալի Պլատֆորման:
- 3) Ն. Լենին. «Թիվղիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիա մասին»—գինը՝ 50 կոպ:
- 4) Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Ներկայացուցիչի գեկուցումը III կոմմունիստական ինտերնացիոնալին—գինը՝ 60 կոպ:
- 5) Կոմմունիստական ինտերնացիոնալի Մանֆքսալը ամրող աշխարհի պրօլետարիատին—գինը՝ 1 ր.

ՀԱՅԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԸ ՀՐԱՄԱՆ ԿՈՒՑԵԱՄԱՐՔ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Ի. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
- 2) Ն. Լենին. «Նամակ Ամերիկեան քանոռներին»—գինը՝ 1 րուր.
- 3) Վ. Ֆրիջէ. «Պրոլետարական պոլղիանուց գինը՝ 2 ր.
- 4) Զիջերին. «Բրեստից յատոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին) —գինը՝ 1 րուր.
- 5) Ներշնչական գործադրութեան մակարդակում իշխանութիւնը:
- 6) Ն. Լենին. «Կար Մարքս» (Համառու կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը)—գինը՝ 1 ր, 50 կ.
- 7) Ներշնչական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան»—գինը՝ 1 ր.
- 8) Ն. ԲՈՒԽՏՈՒԻՆ. «Կոմմունիստների ծրագիրը»—գինը՝ 3 ր.
- 9) Մ. ՊԱՀԼՈՎԻՉ (Կեյտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մէջ»—գինը՝ 3 ր
- 10) ԿԱՐԼ. ՌԱՄԵԿ. I. «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում». II. «Կարլ Լիբկենիստ» (Լիբկենիստի նկարով) —գինը՝ 1 ր.
- 11) «Խորհրդային Առափառութեան նոտուն Վիլսոնին»—գինը՝ 75 կ.
- 12) «Միամական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—գինը՝ 2 րուր.
- 13) Հ. ՅՈՎԱԷՓԵԱՆ. «Դէպի բաղաքայիական կորւ»:
- 14) Գ. ԶԻՆՈՎԵԵ, Իհ. ԿԱՄԵՆԵԵ և Լ. ՏՐՈՅԿԻ. „Ն. Լենին“ (Կաղեմիր հիմք Ուլտանով) —գինը՝ 2 ր.
- 15) Գ. ՄԱՐԲՐԱ և Ֆ. ԷՆԴԵԵԼ. „Կոմմունիստական Մանիթեստ“—Պիեխանովի, Կառուցու և հերինակների առաջարաններով—գինը՝ 3 ր
- 16) Պ. ԼԱՅԱՐԴ. Տնտեսական հողիցիա և Կոմմունիզմ—գինը՝ 50 կ.
- 17) ԿԱՐՊԻՆՈՎԻ. „Ի՞նչ բան է Խորհրդայի հշխանութիւնը և ինչպէս լ. նա կաղմում“—գինը՝ 2 ր.

ՄԱՄԱՐՔ ՏԵՍԵԼ

- 1) Պրանսիստական Մեծ Յեղափոխութիւնը: